

Դ. Ս. Վարդումյան

ՌՈՍՏՈՎԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԵՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԿԵՆՑԱՂԻ ՆՄՈՒՇՆԵՐ

Գրավոր աղբյուրներից հայտնի է, որ հայերը Դոնի ավազանում (ներկայիս Ռոստովի մարզում) բնակություն են հաստատել 18-րդ դարի 70-ական թվականներին, հոծ զանգվածով (12,598 հոգի), ցարական կառավարության ջանքերով գաղթեցվելով Ղրիմից և հիմնելով նոր նախիջևաճ քաղաքը (այժմ՝ Դոնի Ռոստով քաղաքի Պրոլետարական շրջան) ու հինգ մեծ գյուղ, որոնց ճյուղավորումով ավելի ուշ կազմվել է ևս երեք գյուղ:

Անցած շուրջ երկու դարի ընթացքում, տարբեր ժամանակներում և տարբեր տեղերից (ինչպես Հայաստանից, նույնպես և հայաբնակ այլ վայրերից) հայեր գաղթել և բնակություն են հաստատել արդեն գոյություն ունեցող բնակավայրերում, մեծ մասամբ նոր նախիջևաճում: Վերջին հոսանքը, բաղկացած արևմտահայերից, մասամբ էլ հին նախիջևաճիներից, այստեղ է անցել առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Հետագա համալրումները, սակայն, լինելով համեմատաբար սակավաթիվ, նոր որակ չեն մտցրել Ռոստովի մարզի հայ բնակչության կազմի մեջ, այլ գրեթե ամբողջությամբ ձուլվել են նրա հետ:

Այն մասին, թե երբ և որտեղից են հայերը հայտնվել Ղրիմում, հավաստի տեղեկություններ են տալիս մատենագրական աղբյուրները: Հստ վերջինների, հայերը Տավրիկյան թերակղզում սկսել են հաստատվել դեռևս 10—11-րդ դարերից: Սակայն զանգվածային մեծ գաղթը կատարվել է 14-րդ դարում, երբ Հայաստանում ազգային պետականության՝ Բագրատունյաց թագավորության անկումից (11-րդ դ. կեսերին) հետո, հայերի մի ստվար հոսանք դուրս գալով իր հայրենիքից, երկար թափառումներից հոգնած, 1299 թ. հանգրվանում է Վոլգայի ստորին ջրաբաշխում՝ թաթարների մեծ խանության սահմաններում, ապա, կարճ ժամանակ անց, այնտեղից գաղթում ու 1330 թ. բնակություն է հաստատում Ղրիմում: Այնուհետև տարբեր ժամանակներում և տարբեր տեղերից, ինչպես բուն Հայաստանից, նույնպես և Կիլիկյան Հայաստանից (հատկապես վերջինիս հայկական պետականության անկումից՝ 14-րդ դարի վերջերից հետո) մեծ ու փոքր խմբերով, քաղաքական իրադարձությունների բերումով, հայերի նորանոր հոսանքներ են անցնում Ղրիմ, ժամանակի ընթացքում ձուլվելով ավելի վաղ այդտեղ հաստատված հիմնական մեծ զանգվածի հետ:

Խմբագրության կողմից 1959 թ. սեպտեմբերին, Ռոստովի մարզի հայաբնակ վայրերում աշխատել է Հայկական ՍՍՐ ԳԱ Հասարակագիտական բաժանմունքի կոմպլեքսային հետախուզական գիտարշավախումբը (ղեկ.՝ Վ. Ոսկանյան), բաղկացած պատմաբաններից, ազգագրագետներից, արվեստագետներից, բարբառագետներից, բանագետներից, թանգարանային աշխատողներից, ինչպես նաև գիտատեխնիկական անձնակազմից, ընդամենը՝ 16 հոգի:

Այստեղ ներկայացվում են արավախմբի ձեռք բերած ազգագրական, երաժշտական և բանահյուսական նյութերից առավել ուշագրավները:

Նախախորհրդային պատմագիտական գրականության մեջ բավականա-
չափ քննված են Ղրիմում, ապա նաև Դոնի ստորին ավազանում հայերի հաս-
տատվելու հիմնական հանգամանքները, սակայն, նրանց ներքին կյանքը, մշա-
կույթը և մասնավորապես ազգագրությունը թերի, երբեմն էլ միակողմանի է
ուսումնասիրված¹։ Դոնի հայերի ազգագրությանը նվիրված հայ բազմավաս-
տակ բանասեր Ս. Շահազիզի աշխատության մեջ անհամեմատ մանրամասն է
տրված նրանց պատմությունը և հոգևոր մշակույթը, մինչդեռ չափազանց ժլատ
են նյութերը տնտեսական կյանքի և հատկապես նյութական մշակույթի վերա-
բերյալ։ Իսկ մի շարք կարևոր հարցեր, ինչպես բնակավայրը, բնակարանը և
այլն, բոլորովին անտեսված են։ Պատշաճ ուշադրություն չի նվիրվել նաև հա-
յերի և այն ժողովուրդների մշակութային փոխհարաբերությունների լուսաբան-
մանը, որոնց միջավայրում դարերի վեր ապրել են նրանք²։

Արշավախումբն, ահա, պետք է պարզեր այս թերիները լրացնելու հնա-
րավորությունները, ինչպես և կատարեր տեղի հայերի ներքին կյանքի ու կեն-
ցաղի արդի վիճակի նախնական հետազոտություն։

Ձնայած ժամկետի կարճատևությանը (ընդամենը՝ 19 օր), արշավա-
խումբը կարողացավ ուշագրավ նոր նյութեր հավաքել Ռոստովի մարզի հայերի
պատմության, մշակույթի և կենցաղի մի շարք հարցերի վերաբերյալ³։

Արշավախմբի ազգագրական ջոկատի հավաքած նյութերից առավել հե-
տաքրքրություն են ներկայացնում նյութական մշակույթին և սոցիալական
կյանքին վերաբերողները։

Ռոստովի մարզում հայերը բնակվում են մարզային կենտրոն Դոնի Ռոս-
տով քաղաքում, Մյասնիկյանի (կամ Մյասնիկովսկի) շրջանի Չալթիր, Ղրիմ
(Նախկին՝ Թոբզի), Մեծ Սալա, Սուլթան (կամ՝ Փոքր) Սալա, Նեսվեթայ, Կար-
միր Ղրիմ, Լենինական և հարևան շրջանի Սամբեկ (նախկին Կատարինական
կամ Եկատերինովկա) գյուղերում։

Նախկին Նոր Նախիջևանը, որը այժմ Դոնի Ռոստովի մի մասն է դար-
ձել, ազգագրական առումով արդեն հետաքրքրություն չի ներկայացնում։ Չխո-
սելով այն մասին, որ այստեղի հայերի կենցաղի ու սովորույթների մեջ հայ-
կական գրեթե ոչինչ չի մնացել, եթե շահավենք այն, որ ծերունիներից ոմանք
հաճախում են հայկական եկեղեցին և հետևում որոշ կրոնական ծեսերի։
Միջին և երիտասարդ սերունդը հայերեն խոսել, նույնիսկ տեղական բարբա-
ռով, դժվարանում է։ Ահա թե ինչու ազգագրական ջոկատն իր աշխատանքը

¹ Այս հարցերը առավել ամբողջական կերպով լուսաբանված են հետևյալ աշխատություն-
ներում՝ Մ. Բժշկեանց, Ճանապարհորդություն ի Լեհաստան, Վենետիկ, 1830, Н. Дубровин,
Присоединение Крыма к России, СПб, т. II, 1885, т. III, 1887, Կ. Քուշնարեանց, Պատ-
մություն գաղթականության խորհուր հայոց, Վենետիկ, 1895։

² Տե՛ս Ե. Շահազիզ, Նոր-Նախիջևանը և նոր-Նախիջևանցիք, «Ազգագրական հան-
դես», Թիֆլիս, 1901, 7-րդ և 8-րդ գրքեր, 1902, 9-րդ գիրք։

³ Տե՛ս ՀՍՍՌ ԳԱ Հասարակագիտական բաժանմունքի՝ 1959 թ. գիտարշավախմբերի աշ-
խատանքների արդյունքներին նվիրված սեսիայի նյութերը (սեսիան կայացել է 1960 թ. փե-
սրվարի 25—26-ին, Երևանում), ինչպես նաև «КОММУНАР» լրագրի (ՍՄԿՊ Մյասնիկյանի
շրջկոմի և Ռոստովի մարզի աշխատավորների դեպուտատների շրջանային Սովետի օրգան)՝
1959 թ. սեպտեմբերի 10-ի համարը, որտեղ «Հայկական Ակադեմիայի գիտական արշավա-
խումբը Ռոստովի մարզում» ընդհանուր խորագրի տակ զետեղված են արշավախմբի անդամ-
ներ Ա. Գրիգորյանի «Մեր Լոսպեդիցիան և նրա առջև դրված խնդիրները», Դ. Վարդումյանի
«Ինքնատիպ կուլտուրա» և Մ. Մանուկյանի «Նախնական արդյունքներ» հոդվածները։

կենտրոնացրեց Մյասնիկյանի շրջկենտրոն Չալթիր գյուղում, ընդգրկելով նաև վերը նշված Ղրիմ, Մեծ Սալա, Սուլթան Սալա, Նեսվեթայ գյուղերը, մասամբ նաև քաղաքի հայերին⁴։

Մյասնիկյանի շրջանը, որը գրեթե ամբողջությամբ հայաբնակ է, տեղացի հայերը կես կատակ, կես շիտակ կոչում են «Բզդի Հայաստան»։ Շրջանի հայկական գյուղերից յուրաքանչյուրում կան միայն 4—5 տուն այլազգիներ (ռուսներ, ուկրաինացիներ, ադրբեջանցիներ, կորեացիներ և այլք), որոնք այստեղ բնակություն են հաստատել վերջին տարիներս, Հայրենական Մեծ պատերազմից հետո։ Տեղի հայերը մեծ մասամբ, բացառյալ ծերունիների, ազատ խոսում, գրում և կարդում են ռուսերեն։ Չնայած մինչև վերջին տարիներս գյուղերում եղել են հայկական յոթնամյա և միջնակարգ դպրոցներ, սակայն այդ դպրոցներն ավարտողները նույնիսկ դժվարանում են հայերեն մաքուր գրական լեզվով խոսել։ Միմյանց հետ նրանք խոսում են հայերենի տեղական բարբառով, իսկ մեր արշավախմբի անդամների հետ բացատրվելիս գերադասում էին ռուսերենը։ Որոշ ժամանակ անցնելուց հետո, ըստ երևույթին, տիրապետող լեզուն այստեղի հայերի համար դառնալու է ռուսերենը, իսկ հայերենի տեղական բարբառը վեր է ածվելու զուտ, այսպես ասած, կենցաղային լեզվի, մանավանդ որ դպրոցներում ևս ուսուցումն աստիճանաբար ռուսերեն է տարվում՝ հայերեն լեզուն ավանդվում է որպես մի առարկա։

Մյասնիկյանի շրջանը ընկած է Դոնի Ռոստովից անմիջապես հյուսիս-արևմուտք։ Դոնի տափաստանի աշխարհագրական միջավայրը և բնակլիմայական պայմանները միանգամայն տարբեր են Տավրիկյան թերակղզուց և Հայկական լեռնաշխարհից, որտեղից դարեր առաջ գաղթել են հայերը։ Այս հանգամանքը, ինչպես և շուրջ վեցդարյա կտրվածությունը Հայաստանից, երկտրամյա բնակությունը նախ թաթարների (Ղրիմում), ապա ռուսների (կոզակների) միջավայրում, սոցիալ-տնտեսական կյանքում կատարված փոփոխությունները իրենց խոր կնիքն են դրել այստեղի հայերի ամբողջ ներքին կյանքի, կենցաղի, սովորույթների և խառնվածքի վրա։ Նրանց թե՛ նյութագան, թե՛ հոգևոր մշակույթը, լեզուն, հոգեբանությունը հիմնականում պահպանելով հույս ազգային գծերը, շատ նոր տարրեր են ընդունել իրենց մեջ, և ազգային ու նորամուտն օրգանապես ձուլվել են միմյանց, ուստի նպատակահարմար է այդ ամենը քննել իր ամբողջության մեջ, այնպես, ինչպես այսօր դրանք ներկայանում են ուսումնասիրողին՝ իրենց յուրահատկություններով հանդերձ։

Այս հոդվածում մենք կանգ կառնենք միայն գյուղատնտեսական արտադրության, բնակարանի, ամանեղենի և հագուստների մի քանի նմուշների վրա։ Քննությունը պարզում է.

⁴ Դաշտային աշխատանքի ընթացքում ջոկատի ամեն մի անդամ նյութեր է հավաքել որոշակի թեմաների շուրջը։ Բնակչության պատմության, տնտեսական կյանքի և նյութական մշակույթի հետազոտությունը կատարել է Դ. Վարդումյանը (ջոկատի պետ), սոցիալական կյանքին, ընտանիքին, հարսանեկան սովորույթներին՝ է. Կարապետյանը (ավ. գիտ. աշխ.), ժողովրդական տոներին, հավատալիքներին և պաշտամունքներին՝ Ա. Օդարաշյանը (կրտս. գիտ. աշխ.)—ՀՍՍՌ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատակիցներ։ Ջոկատի աշխատանքներին, որպես պրակտիկանո, մասնակցել է նաև Տ. Շահումյանը (Մոսկվայի Պետ. համալսարանի պատմության ֆակուլտետի ազգագրության ամբիոնի 5-րդ կուրսի ուսանողուհի), Գծագրերը արել է Ս. Խաթամաշյանը, լուսանկարները՝ Ռ. Հովհաննիսյանը։

1. Մյասնիկյանի շրջանի հայ գյուղացիների հիմնական զբաղմունքը եղել և մնում է հացահատիկային կուլտուրաների մշակութունը, որի համար չափազանց բարենպաստ են տեղի բնա-կլիմայական պայմանները:

Այստեղ մշակվող հիմնական հացահատիկը հնուց ի վեր ցորենն է, որին թորդեցիներն ասում են «արփա»⁵, ինչպես նաև գարին («ժիտնա» չալթիրցիների խոսվածքով, «արիշ» փոքր սալացիների խոսվածքով), վարսակը («ուլաֆ» ըստ չալթիրցիների), իսկ եգիպտացորեն («չափութ») և արևածաղիկ («կուտ») սկսել են մշակել դարասկզբից: Վերջիններս ներկայումս լայն տարածում են ստացել կուլտնտեսային դաշտերում:

Վերջին տարիներս նույնիսկ բրինձ մշակելու հաջող փորձեր են արվում: Այգ գործը գլխավորում են կորեական ժողովրդա-դեմոկրատական ռեսպուբլիկայից հրավիրված մասնագետները (3 հոգի), որոնք մշտական բնակություն են հաստատել Չալթիրում:

Բանջարա-բոստանային կուլտուրաները միայն կուլտնտեսային շրջանում և այն էլ հատկապես ետպատերազմյան տարիներին են սկսել լայն տարածում ստանալ: Անցյալներում, 70—80 տարի առաջ, այստեղ հայերը կարտոֆիլ չեն մշակել, այն ձեռք են բերել ռուսներից, փոխանակելով ցորենի հետ: Սակայն հետագայում կարտոֆիլի մշակությունը նույնպես տարածվել է, իսկ վարունգ («խիար»), պոմիդոր, բադրիչան, տաքդեղ, սոխ, սխտոր, լոբի («բակլա»), բոդկ (սպիտակ, կարմիր, սև) ցանել սկսել են վերջին տարիներս: Մրգերից⁶ ամենատարածվածը և ամենահամեղը ձմերուկն է, որը նույնպես, ինչպես և սեխը, միշտ ցանել են: Այգիներում սովորաբար լինում են խնձորի, տանձի, բալի (վիշնյա), սալորի, ծիրանի («զրդալի») ծառեր, իսկ դեղձի մասին գյուղացիները, հատկապես տարեցները, որոնք գյուղերից գրեթե դուրս չեն եկել, գաղափար չունեն: Խաղողը, որը տհաճ համ ունի և թթվաշ է, մշակել են 1938 թվականից:

Երկրագործությանը զուգընթաց զարգանում է նաև անասնապահությունը: Գյուղատնտեսական հիմնական աշխատատար պրոցեսները ներկայումս մեքենայացված են, սակայն դեռևս այս կամ այն տեղ կարելի է հանդիպել գործածությունից դուրս եկած հին գյուղգործիքների: Տարեց գյուղացիներին հարցուփորձելու միջոցով հնարավոր եղավ պարզել, որ սկզբնական շրջանում հայերը, որպես վարի գործիք, օգտագործել են, ըստ երևույթին, դեռևս Ղրիմից բերած արորը՝ «խալաչըղ», որին լծել են մեկ զուլգ եզ, ինչպես նաև մեկ խոփանի թեթև գութանը՝ «սաբանը», որին լծել են 3—4 լուծ եզ: Ավելի ուշ

⁵ Ուշագրավ է այն, որ տեղի հայերը հացահատիկին «ապրանք» են ասում, մինչդեռ Հայաստանում գյուղացիներն ապրանք ասում են ընտանի անասուններին (կով, ոչխար, այծ, գոմեշ): «Ապրանք» անվանումով էլ հենց բնորոշվում է ունեցվածքի տվյալ տեսակի խաղացած վճռական դերը գյուղացու տնտեսական կյանքում: Իսկ որ անցյալում Ռոստովի մարզի գյուղացիների կյանքում այդպիսի գեր է խաղացել հենց հացահատիկը, վկայում է նաև հետևյալ ավանդությունը: Պատմում են, որ Չալթիր գյուղի բնակավայրի հին մասում ընկնող բլուրում մի քանի կուլակների տներ են եղել և նրանք կուլակաթափման ժամանակ պետական մարմիններից թաքցրել են մեծ բանակությամբ ջորեն: Հայտնաբերելուց հետո, օրերով ու շաբաթներով սայլերով տեղափոխել են հացահատիկը և այդպես էլ չեն կարողացել այն սպառել: Այդ ժամանակից էլ բլուրը կոչվում է «Ոսկե սար» (.Золотая гора):

⁶ Հետաքրքիր է, որ այստեղի հայերը «միրգ» հավաքական հասկացությունը արտահայտում են «եմիշ» բառով, մինչդեռ Հայաստանի մի շարք գյուղերում (Լոռի, Իջևան-Տավուշ և այլն) եմիշ ասում են սեխին:

դրանց փոխարինել է երկխոսությանի գութանը՝ «բուքառ», որն արդեն աշխատեցրել են ձիու ուժով:

Քաղը, նայած հացահատիկի տեսակին, նախապես կատարել են կամ արմատահան անելու («քոքից» ձեռքով հանելու) միջոցով և կամ մանգաղով («օրախ») ու գերանդիով («չալղը»): Հետագայում լայն տարածում է ստացել ձիաքարշ ձեռքի նետիչ ունեցող մեքենայով (լորոգրեյկա) հնձելը, իսկ ավելի ուշ մուտք է գործել նաև «խնթնակապը» (սամովյազկա), որը խիստ թանկ լինելու պատճառով, մատչելի է եղել միայն «զենկիներին» (հարուստներին):



Նկ. 1. Քարե կոտկա (կատկ): Չալթիբ գյուղ:

Նախքան ունեցուցիան և նույնիսկ մինչև 1920-ական թվականների կեսերը, Ռոստովի մարզի հարուստ հայերի և կողակների հունձը սովորաբար կատարելիս են եղել Վորոնեժի, Ռյազանի և Տամբովի նահանգներից եկած ուսուցիչները, որոնք հնձել են գերանդիով, և Կազանի թաթարները, որոնք հնձել են մանգաղով: Նրանք եկել են հնձի ժամանակ՝ ընտանիքներով, ֆուրգոններին բարձած: Երբ սկսել են տարածվել հնձող մեքենաները և քիչ է զգացվել նրանց աշխատանքի կարիքը, այդ հնձվոր գյուղացիները փորձեր են արել ջարդելու մեքենաները, որոնք խլում էին իրենց աշխատանքը:

Սկզբնական շրջանում հացահատիկը կալսել են ևզներն ու ձիերը «կատում» (ինչպես կոչում են շալթիբիցիները) կամ «հարմանում» (ինչպես կոչում են լորեգրեյիները) պտտեցնելու կամ «ծիփա»-ով ծեծելու միջոցով: Սրանց անհատ է եղել Հայաստանում ամենուրեք տարածված կալսելու գործիքը՝ կամը, ինչպես նաև ջարջաուր: Ավելի ուշ տեղի ուսաններից ընդօրինակել են «կատուկը», որին ասում են «կոտկա» (սա սկզբում շինվել է քարից, իսկ ավելի ուշ՝ երկաթից), որը աշխատեցրել են ձիու կամ էջի միջոցով (նկ. 1): Հացահատիկը աղացել են հողմաղացով: Ուշագրավն այն է, որ հայերն առհասարակ

ծանոթ չլինելով հողմաղացի կուլտուրային, բայց հնագույն դարերից ճանաչված ջրաղացը, այստեղ, հարմարվելով տեղի պայմաններին և ուսանելիք ընդօրինակելով հողմաղացը, այն կոչում են «քամիի ջրաղաց»։ Ամենախոշոր աղացը, բայց արդեն էլեկտրականությամբ գործող, Չալթիբի ալրաղացն է, ուր 1922 թվականից սկսած նաև մեծ քանակությամբ արևածաղկի ձեթ են հանում («կուտից եղ կոխել»), մինչդեռ մինչ այդ ձեթը հանել են պրիմիտիվ միջոցներով՝ լոկոմոբիլի մամլիչի ճնշմամբ։ Զիթհանի՝ մինչև օրս էլ Հայաստանում տարածված հնագույն կուլտուրան այստեղի հայերի նախնիները կորցրել են դեռևս Ղրիմում։

* * *

Առավել հետաքրքիր են բնակավայրին և բնակարանին վերաբերող նյութերը։ Որպես բնակավայրի բնորոշ օրինակ, վերցնենք շրջկենտրոն Չալթիբ գյուղը։ Այն նախապես տեղավորված է եղել փոքր գետակի ափերի բլրալանջերին և շատ բանով դեռևս հիշեցրել է հայկական բնակավայրերը՝ տները դասավորված են եղել միմյանց մոտ, ազգակցական թաղերի սկզբունքով։ Հին ազգակցական թաղերի մնացուկները դեռևս պահպանվում են գյուղի այդ մասում։ Հետագայում, հատկապես սովետական տարիներին, գյուղը տարածվել է մերձակա հարթավայրում, խիստ ընդարձակվել և գրեթե միացել է հարևան Ղրիմ (Թոբդի) գյուղին, որը նույնպես իր հերթին տարածվել է դեպի Չալթիբ։ Այդ ընթացքում, խիստ փոխվել է բնակավայրերի հատակագիծը՝ բնակարանները դասավորվել են խճուղիների ու փողոցների, կամ, ինչպես տեղում ընդունված է ասել՝ «գծերի» («ЛХХХХ») երկայնքով, որն ակնհայտորեն ուսական գյուղական բնակավայրի կառուցապատման ազդեցության արդյունք է։

Ուշագրավ փոփոխություններ է կատարվել նաև բնակարանի մեջ թե ներքին հատակագծային առումով և թե արտաքին տեսքի մեջ։ Թեև շատ բան դժվար է վերականգնել, քանի որ գյուղը արագորեն վերակառուցվելու շնորհիվ, բնակարանի հնագույն կոմպլեքսը ոչ մի տեղ չի պահպանվել ամբողջությամբ, իսկ գրավոր աղբյուրներում գրեթե ոչինչ չկա դրա վերաբերյալ (նույնիսկ Շահագիզը ոչ մի խոսք չի ասում բնակարանի մասին)։ Այդուհանդերձ, մեր հավաքած նյութերը թույլ են տալիս նախնական որոշ պատկերացում կազմել բնակարանի կրած էվոլյուցիայի մասին։ Ղրիմից այստեղ գաղթելուն պես, ըստ երևույթին, կառուցվել է հիմնականում երկու տիպի բնակարան՝ քաղաքատիպ-կղմինդրածածկ, և գյուղատիպ՝ ճլախոտով ծածկված։ Առաջիկա մի կողմ թողնելով քաղաքատիպը, դառնանք գյուղական բնակարանին։

Գյուղական բնակարանները սկզբնական շրջանում կառուցվել են կամ փայտից և կամ տեղում առատորեն հայթայթվող շերտաքարից, որը, ի դեպ, խիստ փխրուն է և շուտ հողմնահարվող⁷։ Բոլոր դեպքերում էլ բնակարանի

⁷ Ի դեպ, արժե նշել, որ համապատասխան շինարարի բացակայության պատճառով, այստեղի հայերը գրեթե կորցրել են գեղեցիկ հինգ եկող և մինչև օրս էլ Հայաստանում տարածված բարձրարվեստ գերեզմանաքարեր պատրաստելու կուլտուրան։ Մյասնիկյանի շրջանի գյուղական գերեզմանոցներում խիստ հողմահարված գերեզմանաքարերի կողքին XIX դարի կեսերից սկսել է տարածում ստանալ երկաթասալե հուշարձանը։

պատերը դրսից նույնպես սվաղվել են, մի բան, որը բացառապես ռուսական ազդեցության արդյունք է։ Առաստաղը ծածկվել է եղեգնով, իսկ ձեղունը, որը երկթեք է, ճլախոտով։

Բնակարանները սովորաբար եղել են ու ներկայումս էլ մեկ ու կես հարկանի են։ Գրեթե երեք-քառորդով հողի մեջ թաղված դետնահարկը կոչվում է «մաղազի»։ Սրա հատակի կենտրոնում փորված է հացահատիկի պահման կլոր և խոր հորը («ուռոս»), իսկ պատերում թողնված են խորշեր («տուլաք»), կավե ամաններով զանազան մթերքներ պահելու համար։ Հենց այստեղ էլ պահվում են տնային տնտեսության մեջ դեռևս լայն կիրառություն ունեցող ամանեղենի զանազան տեսակներ, որոնք գրեթե մնացել են անաղարտ։ Դրանց տարատեսակներին կարելի է հանդիպել ներկայումս էլ հատկապես արևմտահայերի



Նկ. 2. Ամանեղեն՝ փեթաք (թափուցիկ նյութերի աման, պատրաստված հողի և հարդի չազախից), թեքնե (խմորի փայտե տաշա՝ փոքր և մեծ), դրաբեղ (փայտե օեղան-տախտակ), վրան՝ կավե փարչեր և մաղ. Զալթիբ գյուղ։

մոտ (նկ. 2)։ Տուլաբը ծառայում է որպես թթվեղենի ու կաթնեղենի մառան։ Վերին հարկը, որ բուն բնակարանի կոմպլեքսն է, կոչվում է «դուն» (տուն)։ Բակից սակավաստիճան «բասմախը» (սանդուղք) առաջնորդում է «բաց սուֆա» կամ «մնջիր», ապա՝ «փակ սուֆա» («կալդոր»), այստեղից՝ «հայաթ»։ Վերջինս նույն դերն է կատարում, ինչ բուն հայկական բնակարանի «սրահը» (կամ «բակը»)՝

Բնակարանի հին կոմպլեքսում հայաթից մի դուռ բացվել է տան մեջ, մյուսը՝ «աշխանայի» (ալրեղենի մառան—խոհանոցի), երրորդը՝ գոմի («առան») մեջ։

8 «Հայաթ» (թուրքերեն) նույնն է, ինչ որ հայերեն «բակ» բառը, երկուսն էլ նշանակում են «двор», որը տվյալ դեպքում փակ է, այսինքն՝ սրահ է։


Ի տարրերություն, սակայն, բուն հայկականի, այստեղ հայաթից գոմ տանող դուռը հատկացված է եղել միայն մարդկանց, իսկ անասունները ելումուտ են արել գոմի ետնամուտքի դռնով։ Հետագայում, հատկապես սովետական տարիներին, այս կոմպլեքսը արագորեն վերակառուցվում է՝ գոմը բոլորովին անջատվում է բնակելի մասից և տեղադրվում առանձին։

Աշխանայի մի մասն է կազմել «փուռունդունը», ուր տեղադրված է եղել (ներկայումս էլ դեռ շատ տներում տեղադրված է) հաց թխելու փուռը։ Սակայն վերջին տարիներին «փուռունդունը», փոխ հետ միասին արագորեն անջատվում է բնակելի կոմպլեքսից և տեղադրվում բաց բակում, որպես առանձին կառուցում, իսկ որպես ջեռուցման միջոց բնակարան է մուտք գործում ուսական վառարանը («պիլետ»)։ Այսպիսով, բնակարանի կոմպլեքսը հետզհետե բեռնաթափվում է օժանդակ տնտեսական շենքերից, իսկ սրան զուգընթաց ընդարձակվում է բուն բնակելի մասը։ Այսպես, տեղի բնակարանի հին կոմպլեքսի մեջ բնակելի մասին հատկացված է եղել միայն «դունը», որը ունեցել է քառակուսի հատակագիծ։ Հետագայում, սկսած 19-րդ դարի կեսերից, այն միջնորմով բաժանվել է երկու անհավասար քառանկյունի մասերի, ըստ որում մեկը կոչվել է «մեծ դուն», իսկ մյուսը՝ «բզդի դուն» կամ «կալմատկա» («կոմնատկա»)։ Ներկայումս, նոր կառուցվող բնակարաններում լինում է 3—4 սենյակ։ Սրանք բոլորը ներքին դռներով հարաբերվում են միմյանց, ինչպես նաև «աշխանայի» հետ (նկ. 3, նկ. 4)։



Նկ. 3. Լուսեղեն Քաչերևսի Ավետյանի բնակարանի (կառուցված 1930 թ.) արտաքին տեսքը։ Բնակարանը մեկուկես հարկանի է, նկուղահարկը «մաղաղին» է, վերին հարկը՝ «դունը», ձախ կողմը երևում է «փուռունդունը»։ Չալթիր դուռը։

Խիստ հետաքրքիր է կրակարանի տեսակի և տեղադրման հարցը։ Այստեղի հայերը պատկերացում չունեն թոնրի մասին, որը մինչև օրս էլ լայնորեն տարածված է Հայաստանում։ Մեր հավաքած առանձին կցկտուր նյութերը համադրելով բուն հայկական նյութերի հետ, կարելի է նկատել, որ հավա-




Նկ. 4. Շողակաթ Լուսավարունի Փսերդիյանի տան վերնահարկի հասակագիծը (տունը կառուցվել է 1890 թ., «պիլետը» 1940 թ.): 2. մեծ սրահ, 3. կալ-մատկա (կոմնատկա), 4. աշխանա (մառան), 5. հայաթ (սրահ, բակ), 6. փակ սուֆա (կալդոբ), 7. բաց սուֆա (մնջիր), 8. փուռ, 9. փուռի սեղան, 10. քամատույզ (ապակեպատ պահարան), 11. բասմախ (սանդուղք), 12. օջախ, 13. հայելի:



Նկ. 5. «Կուրաթի» կոչված խմորեղեն թխելու: Չալթիր գյուղ:

նաբար դարեր առաջ, դեռևս Ղրիմում, հայերը կորցրել են թոնիրը, դրա հետ միասին՝ նաև քառակուսի բնակարանի հազարաշեն ծածկն ու երթիկը, ինչպես նաև լավաշ հացը։ Նրանք ներկայումս փոխում թխում են ռուսական ձևի «բոուզ» հաց, իսկ տոնական օրերին՝ նաև լավաշ հիշեցնող «լոշ» հաց, իսկ ճաշը եփում են փռան բերանի մոտ սարքված օջախի վրա։ Հետաքրքիր է, մյուս կողմից, որ «փուռունդունը» շատ նման է Հայաստանում մինչև 1920-ական թվականները խիստ տարածված գոմի օգային (գոմին կից սենյակ)։ Փուռունդունն ունի քառանկյունի-երկարուկ տեսք։ Դրա ներսում, կողային



Նկ. 6. Օրոցք կամ բեշիկ։ Զալթիր գյուղ։

պատերի տակով, զուգահեռ ձգվում են հողե թումբեր, որոնք կոչվում են «սեքի» և որոնք գոմի օգայի «սաքուն» են, իսկ դռան հանդիպակաց պատի մեջ տեղադրված է օջախը՝ փռան հետ միասին։ Այդ նույն տեղը գոմի օղայում լինում էր «բուխարին» (նկ. 5)։

Այսպիսով, պարզ է, որ Ռոստոմի մարզի հայերը դարերի ընթացքում ստեղծել են բնակարանային յուրահատուկ մշակույթ, որի մեջ բուն հայկականի հետ սինթեզվել են թաթարականի և ռուսականի տարրերը։ Միանգամայն անխառն վիճակում պահպանվել և մեզ են հասել տնային կենցաղի որոշ առարկաներ։ Դրանցից ամենաբնորոշը հայկական օրորոցն է (նկ. 6)։

Խիստ յուրահատուկ գծեր է դրսևորում նաև այստեղի հայերի տրադիցիոն տարազը և դրա հետ անմիջականորեն կապված զարդարանքն ու ասեղնագործությունը, ըստ որում վերջինս դուրս է գալիս տարազի շրջանակներից և արտահայտվում տնային կենցաղի մեջ առհասարակ։

Ներկայումս տրադիցիոն տարազը բոլորովին դուրս է եկել կենցաղից, սակայն դրա որոշ տարրեր դեռևս պահպանվել են առանձին գյուղացիների

մոտ, իսկ ժամանակի լուսանկարները (19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի) լուսանկարողական պատկերացում են տալիս դրա մասին: Կանացի տարազի մեջ առանձին տեղ է գրավել գլխի հարդարանքը՝ «նաշխած փոշին» իր «չամբար-տակի»-ով, որն իր վրա ակնհայտորեն կրել է թաթարականի ազդեցությունը (նկ. 7): Իսկ կանացի մարդարտաշար թանկարժեք գոտին իր բարձր արվեստով անմիջականորեն կապվում է հայ կիրառական արվեստի տրագիգիաների հետ: Ընդհուպ մինչև 19-րդ դարի վերջերը պահպանված տղամարդու ունարենի գլխարկը՝ «գտակ», հում կաշվե ոտնամանը՝ «չարուխ»,



Նկ. 7. Կանացի գլխի հարդարանք՝ «նաշխած փոշի» (արտանկարված է 20-րդ դարի սկզբի լուսանկարից): Զավթի գյուղ:

սպիտակ բրդե դուլպան՝ «խալչին» և այլն, իրենց կրելու ձևերով անմիջապես առնչվում են արևմտահայ մշակույթի հետ: Իսկ արտահագուստի «բուրուշ-մուշուսի» և «տուլուպ-մուշտակի» վրա զգացվում է կողակակաճի ուժեղ ազդեցությունը (նկ. 8):

Հակիրճ հաղորդման մեջ դժվար է սպառել այն բոլոր նյութերի համեմատական կազմակերպությունը 10—7

տական նկարագրությունը, որոնք կսուն գիտարշավախմբի տրամադրության տակ, Սակայն բերված նյութերից էլ պարզ է, որ Ռոստովի մարզի հայ գյուղացիների տրադիցիոն մշակույթը և կենդանի զարգացել է նախ թաթարական, ապա ռուսական մշակույթների սերտ փոխազդեցության պայմաններում:



Նկ. 8. Տղամարդու առօրյա տարադ (արտանկալված է 19-րդ դարի վերջի ռուսականներից): Ձախթից դուրս գալիս (դիտարկ), խալչին (գուլպա), շարուխ (տրեխ):

Այժմ այստեղ են թափանցում հայ ժողովրդական ու դասական երգն ու երաժշտությունը, գրականությունն ու արվեստը: Միաժամանակ ուժեղ ազդեցություն է գործում ռուսական ժամանակակից կուլտուրան: Այդ ամենի շնորհիվ մարզի հայերը դուրս են եկել տեղային սահմանափակությունից և դարձել նոր հասարակարգի ակտիվ կառուցողներ: